

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ
ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

§ 5. ԹՎԱՅԻՆ ՈՒՂԻՂ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

2. ԹՎԱՅԻՆ միջակայքեր



Առաջադրանքներ

1. Ապացուցել, որ ցանկացած a և b իրական թվերի համար ճիշտ են հետևյալ անհավասարությունները՝
 ա) $|a+b| \leq |a|+|b|$, բ) $|a| \leq |b|+|a-b|$:
2. Օգտվելով թեորեմ 1-ից՝ լուծել հավասարումները.
 ա) $|x-1|+|x-5|=4$, բ) $|x-1|+|x-5|=3$, գ) $|x-1|+|x-5|=6$:
3. Ելնելով իրական թվերի երկրաչափական տերմինաբանությունից, լուծել անհավասարումը.
 ա) $|x| \leq 4$, բ) $|x+3| \leq 6$, գ) $(x-5)^2 \geq 9$:
4. Գտնել թվային ուղղի վրա գտնվող A, B, C, D կետերի զույգ առ զույգ հեռավորությունները, եթե, համապատասխանաբար, դրանց a, b, c, d կոորդինատներն են՝
 $a=1,730856$; $b=-3,802007$, $c=2,317596$; $d=-0,250701$.
5. Ապացուցել, որ եթե թվային ուղղի վրա գտնվող A, B, C, D կետերի համար ճիշտ է $AB=CD$ առնչությունը (B -ն A -ից աջ է, իսկ D -ն՝ C -ից աջ), ապա այդ կետերի a, b, c, d կոորդինատները բավարարում են $a+d=b+c$ հավասարությանը: